ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3999-Ա « 18 » հոկտեմբերի 2024թ.

ԱՐԱՄԻ ՓՈՂՈՑԻ Հ.Հ.88/1, 88/9 ԵՎ 88/10 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մելանյա Կոզմոյանի լ/ա, ինչպես նաև սեփականատեր Երվանդ Մինասյանի դիմումը՝ Մելանյա Կոզմոյանին և Երվանդ Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող, համապատասխանաբար՝ Արամի փողոցի հ.88/1 և Արամի փողոցի հ.88/9 և հ.88/10 հասցեներում գտնվող բնակելի տների և ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19012024-01-0261, հ.12012024-01-0234, հ.22062023-01-0254 վկայականներ) գործառական նշանակությունները փոփոխելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի հ.88 որոշման հ.1 հավելվածի 7-րդ կետով և հաշվի առնելով առողջապահության նախարարության 10.09.2024թ հ.ԱԱԳ/14.1/26939-24 գրությունը, աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից տրված տեղեկությունը բուժական սպա կենտրոն օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-82343-24, Դ-83415-24 եզրակացությունը.

1. Մելանյա Կոզմոյանին և Երվանդ Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող, համապատասխանաբար՝ Արամի փողոցի հ.88/1 և Արամի փողոցի հ.88/9 և հ.88/10 հասցեներում գտնվող շինությունների գործառական նշանակությունները, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, սահմանել որպես հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ «ՀՀՇՆ 31-01-2014» պահանջներին չհակասելու պայմանով:

2. Հանձնարարել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները հաշվառել որպես հասարակական:

3.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ սահմանված շինությունների գործառական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման՝ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի ու Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ